



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 28975
Մարտ 26, 1985

Արժանաշնորհ
Տ. Արսէն Բհնյ. Պարսամեան
Հովիւ Ս. Յակոբ Եկեղեցւոյ
Նախագահ ծխական Խորհուրդի
Ռիչմընտ.

Սիրելի Տէր Արսէն,

Ստացած ենք Մարտ 5, 1985 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Յունուար 29ին գումարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդի նորընտիր ղիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Պետրոս Պանտազեան
Ճան Պարոնեան
Բանի Կրին
Հէնրի Մակարեան
Վիրճինիա Ապրընսթի -մէկ տարուան համար-